

ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Անի Զոհրաբի Գրիգորյանի Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված «ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման բարելավման ուղիները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Պետական պարտքի բեռը դարձել է համաշխարհային մարտահրավեր, իսկ դրա նվազեցումը՝ բավական բարդ և խնդրահարույց երևույթ: Պատմականորեն պարտքի բեռի նվազեցման ուղիներ եղել են տնտեսական աճը, զսպող հարկաբյուջետային քաղաքականությունը, դեֆոլտը և վերակառուցումը, ինֆլյացիան, ֆինանսական ճնշումները (կապիտալի հոսքերի սահմանափակում, տոկոսադրույքների կարգավորում և այլն):

Ճգնաժամային իրավիճակներում էլ ավելի կարևոր է դառնում պետական պարտքի, հատկապես արտաքին պետական պարտքի խելամիտ կառավարման հրամայականը:

Թեև ՀՀ Կառավարությունը 2008 թվականին կարողացավ հաղթահարել ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացրած մարտահրավերները, քանի որ ուներ ոչ այնքան բարձր պետական պարտքի մակարդակ: Այնուամենայնիվ, Կառավարության պարտք-ՀՆԱ հարբերակցությունը 2020 թվականին կազմեց 63,5 տոկոս՝ անցնելով ՀՀ օրենսդրությամբ ամրագրված առավելագույն 60 տոկոսի շեմը, ուստի պարտքի չնվազող բարձր մակարդակը կարող է խիստ բացասական ազդեցություն ունենալ ՀՀ ֆինանսատնտեսական համակարգի վրա՝ հատկապես շուկերի դրսևորման պարագայում:

Հայաստանում նկատվեց ֆինանսատնտեսական ճգնաժամի երկրորդային ազդեցությունը, որը տնտեսության վրա ներազդեց հետևյալ 4 ուղղություններով՝ արտերկրից ստացվող մասնավոր տրանսֆերտների զգալի կրճատում, համաշխարհային շուկաներում հումքի և հատկապես մետաղների գների նվազում, արտահանվող

միջև բազմակի գծային ռեգրեսիոն և կորելացիոն գնահատումներ՝ արդյունքները ստուգելով «Shapiro–Wilk» թեստի միջոցով:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը բաղկացած է 137 էջից՝ առանց հավելվածների:

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հիմնական գիտական արդյունքները և նորույթը, հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները, կառուցվածքն ու ծավալը:

Հետազոտության առաջին՝ **«Արտաքին պետական պարտքի կառավարման տեսամեթոդաբանական հիմքերը, արտերկրյա փորձը եվ կառավարման օրենսդրահրավական հիմքերը»** գլխում ներկայացվել են արտաքին պետական պարտքի վերաբերյալ տնտեսագիտական տարբեր դպրոցների ընկալումները, պարտքի գոյացման պատճառները, սպասարկման միջազգային պրակտիկան, արտաքին պետական պարտքի կառավարման օրենսդրական հիմքերը ՀՀ-ում և գործընկեր մյուս երկրներում:

Ատենախոսն ուսումնասիրել է պարտքի վերաբերյալ տարբեր ժամանակաշրջանների տեսաբանների ընկալումները, պարտքի կառավարման արտասահմանյան պրակտիկան, իրականացրել է համեմատական վերլուծություն ՀՀ-ի և առևտրային գործընկեր երկրների պարտքի կառավարման ռազմավարությունների միջև:

Սույն գլխում ձևակերպվել է հինգերորդ գիտական նորույթը՝ հիմք ընդունելով արտաքին պետական պարտքի կառավարման արտասահմանյան հաջողված փորձի արդյունքները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Արտաքին պետական պարտքի կառավարման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում քննարկվել են

ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման, գնահատման մոտեցումները, ուսումնասիրվել են ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման ռազմավարությունը, արտաքին պարտավորությունների սպասարկման առանձնահատկությունները և պոտենցիալ ռիսկերը՝ միջնաժամկետ հորիզոնում:

Այս գլխում ատենախոսը վերլուծել է ՀՀ արտաքին պետական պարտքի վարքագիծը՝ կարևորելով արտաքին պետական պարտքի անխոչընդոտ սպասարկումը հատկապես վերջին տարիներին ՀՀ առջև ծառայած մարտահրավերների տեսանկյունից:

Ատենախոսը ուսումնասիրել է ՀՀ պետական պարտքի կայունության գնահատման առկա մոտեցումները, որոնց արդյունքում առաձնացրել է պարտքի գնահատման տեսանկյունից շոշափելի համարվող փոխարժեքի և վերաֆինասավորման տոկոսադրույքի շոկերը:

Սույն գլխում գիտական նորույթ չի ձևակերպվել, սակայն գնահատման արդյունքները հիմք են հանդիսացել ատենախոսության հաջորդ գլխում կատարված գնահատումների համար:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման մոտեցումներն ու դրանց լուծման ուղիները»** գլխում քննարկվել են ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման հիմնահարցերը, ՀՀ պետական պարտքի սպասարկման ներուժի գնահատման մոտեցումը միջազգային ռեզերվների հաշվին, ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման արդյունավետության բարելավմանը միտված ուղիները:

Առաջին ենթագլխում ատենախոսը գնահատվել է ՀՀ իրական աշխատավարձի, միջին ամսական աշխատավարձի, պետական պարտատուսմերի միջև գոյություն ունեցող կապը՝ արդյունքները ստուգելով «Shapiro–Wilk» թեստի կիրառությամբ:

Սույն ենթագլխում գնահատվել է նաև ՀՀ ամսական միջին աշխատավարձի, առաջնային ազդեցության փոփախականներ դիտարկված պետական բյուջեի եկամուտների, պաշտոնական տրանսֆերտների, ՀՀ համախառն ներքին արդյունքի և ՀՀ արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև փոխազդեցությունը՝ ռեգրեսիոն մեթոդով:

Ատենախոսը եզրակացրել է, որ իրական աշխատավարձի, միջին ամսական աշխատավարձի և պետական պարտատոմսերի միջև կապը նկատելի է: Հաշվի առնելով միջին ամսական աշխատավարձի գնահատման ազդեցությունը արտաքին պետական պարտքի վրա, ատենախոսը եզրակացրել է, որ ապագա հեռանկարում, իրական աշխատավարձի բարձրացումը կարող է նպաստող գործոն հանդիսանալ ՀՀ պետական պարտքի կառուցվածքում արտաքին պետական պարտքից կախվածության թուլացման և ներքին փոխառու միջոցների ավելացման առաջարկված մոտեցման հիմնավորման տեսանկյունից:

Ատենախոսության այս ենթագլխում հիմնավորվել է առաջին գիտական նորույթը:

Երկրորդ ենթագլխում ատենախոսն ուսումնասիրել է ՀՀ կենտրոնական բանկի միջազգային պահուստների համալրվածության ներկա մակարդակը՝ գնահատելու ՀՀ ռեզերվային միջոցներով ժամանակին և ամբողջ ծավալով արտաքին պարտավորությունների սպասարկման ներուժը:

Սույն ենթագլխում ատենախոսը գնահատել է ՀՀ միջազգային պահուստների համալրվածությունն՝ ըստ «Ռեդի»-ի չափանիշի և ՀՀ միջազգային պահուստների և արտաքին պարտքի սպասարկման ծավալների հարաբերակցությունը՝ «Գվիդոտի»-ի կանոնի համաձայն:

Ատենախոսը եզրակացրել է, որ ՀՀ միջազգային ռեզերվային միջոցներով համալրվածության ներկա մակարդակը գնահատվում է «բավարար»՝ անկանխատեսելի շոկերի ի հայտ գալու պարագայում:

Այս ենթագլխում ձևակերպվել է երկրորդ գիտական նորույթը:

Երրորդ ենթագլխում ատենախոսը իրականացրել է ՀՀ պարտքի կայունության գործակցի գնահատում՝ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից պարտապան երկրների դասակարգման նպատակով կիրառվող արտաքին պարտքի և արտահանման տարեկան մեծության հարաբերակցության մեթոդաբանական լուծումների համաձայն:

Ատենախոսը եզրակացրել է, որ հաշվի առնելով նշված մեթոդաբանությամբ պարտքային գործակցի գնահատման չափանիշները (≥ 220 – կրիտիկական; $-132-220$ –

ընդունելի; ≤ 132 - ցածր), պարտքային գործակիցն ուսումնասիրված ժամանակահատվածներում գտնվել է «ընդունելի» միջակայքում, բացառությամբ 2010, 2016, 2021 թվականների, երբ պարտքային գործակիցը գտնվել է «կրիտիկական» տիրույթում:

Սույն ենթագլխում ատենախոսն իրականացրել է բազմագործոն կորելացիոն և ռեգրեսիոն գնահատումներ՝ ՀՀ-ում տնտեսական ակտիվության, արտարժույթային փոխարժեքի (ԱՄՆ դոլար) և արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև, շեշտադրելով ՀՀ պետական պարտքի նվազեցման ռազմավարության մեջ հիմնական թիրախ համարված բարձր տնտեսական աճի ապահովումն՝ իբրև պարտքի սպասարկմանն ուղղվող միջոցների ապահովման կենսական ցուցիչ:

Ատենախոսը եզրակացրել է, որ ուսումնասիրված ժամանակահատվածում ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշի, դոլարի փոխարժեքի տատանումները (1 տոկոսային կետով) հանգեցնում են ՀՀ արտաքին պետական պարտքի համապատասխանաբար 0,1 և 0,7 տոկոսի փոփոխության:

Այս ենթագլխում է ձևակերպվել է երրորդ և չորրորդ գիտական նորոյթները:

«Եզրակացություններ» բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական արդյունքները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Ատենախոսության հետազոտության օբյեկտ է ճանաչվել ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման ոլորտը, իսկ առարկա՝ ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման արդյունավետության բարելավման հիմնահարցերը:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել պարտքի կառավարման և հարկաբյուջետային քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացում՝ ՀՀ ֆինանսների նախարարության, Կենտրոնական բանկի կողմից, իսկ հետազոտության արդյունքները կարող են կիրառվել պարտքի և ֆինանսական զարգացմամբ հետաքրքրված հետազոտողների կողմից:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորոյթը

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվել է հետևյալում.

- Կառուցվել են ՀՀ տնտեսական ակտիվության, արտաթուփային փոխարժեքի (դրամ/1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեք) և արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև կորելացիոն և բազմակի գծային ռեգրեսիոն վերլուծության մոտեցումներ, որոնց արդյունքների կիրառումը կնպաստի ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման բարելավմանը:

Ատենախոսության վերաբերյալ մեր կողմից ներկայացվել էին հետևյալ դիտողությունները.

1. Աշխատանքի առաջին նորույթում հեղինակը նշում է, թե՛ կառուցվել է արտաքին փոխառու միջոցներից կախվածության թուլացման առանցքային գործոններ դիտարկված իրական աշխատավարձի, միջին ամսական աշխատավարձի և պետական պարտատոսմերի փոխկապակցության գնահատման մոտեցում, որի միջոցով հիմնավորվել է ՀՀ պետական պարտքի կառուցվածքում արտաքին պարտքի տեսակարար կշռի նվազեցման նպատակով ներքին փոխառու միջոցներին ապավինող քաղաքականության արդյունավետությունը: Նշվածը դժվար է համարել նորույթ, քանի որ մի կողմից ներքին պարտքի տեսակարար կշռի ավելացումը, ինչպես ցույց է տալիս վերջին տարիների վիճակագրությունը, պետական քաղաքականության մաս է կազմում, մյուս կողմից պարզ է, որ ներմուծող տնտեսությունում աշխատավարձի աճը, հանգեցնելու է խնայողությունների աճին, որոնք տեղաբաշխվելու են առավելապես ապահով ակտիվներում:
2. Պարզ է, որ պետական պարտքի սպասարկումը ենթադրում է պետական բյուջե համապատասխան դրամական հոսքերի մուտք: Այս առումով հեղինակը պետք է անդրադառնար նաև պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման երկարաժամկետ խնդիրներին, հաշվի առնելով, որ տնտեսության զարգացման համար կարևոր է բնակչության

դրամական միջոցների ներդրումը առավելապես իրական հատվածում և ոչ միայն ուղղորդում խնայողություններին:

3. Պետական պարտքի կառավարումը ենթադրում է նաև ծախսված միջոցների վերահսկողություն, ծրագրերի արդյունավետության վերլուծություն, խնդիրների բացահայտում և դրանց լուծման և վերացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, որը աշխատանքում պատշաճ ներկայացված չէ:
4. Ատենախոսը իր երկրորդ նորույթում նշել է, որ մշակվել է ՀՀ արտաքին պահուստների օպտիմալ մակարդակի գնահատման համալիր մոտեցում, որի հիմքում դրվել են միջազգային պրակտիկայում կիրառվող «Ռեդի»-ի ու «Գվիդոտի»-ի չափանիշները, որի արդյունքում հիմնավորվել է անկանխատեսելի շոկերի ի հայտ գալու դեպքում արտաքին պահուստներով պարտքի սպասարկման բավարար ներուժը: Նշվածի արդյունավետությունը հիմնավորելու համար անհրաժեշտ էր ներկայացնել ՀՀ արտաքին պահուստների կառավարման ՀՀ ԿԲ առկա մոտեցումները, դրանք առավելապես խորը վերլուծել, բացահայտել դրանց թերությունները և առաջարկվող մոտեցման առավելությունները՝ առկայության պարագայում:
5. Ատենախոսը հաջորդ նորույթում նշել է, որ առաջարկվել է ՀՀ պետական պարտքի կայունության գնահատման մոտեցում՝ հիմնվելով ԱՄՀ և ՀԲ կողմից պարտապան երկրների դասակարգման նպատակով կիրառվող արտաքին պարտքի և արտահանման տարեկան մեծության գործակիցների հարաբերակցության գնահատման մեթոդաբանական լուծումների վրա: Ենթադրվում է, որ նորույթի ձևակերպման մեջ ավելորդ է գործակից բառը, քանի որ ատենախոսության մեջ հարաբերությունը վերաբերում է մեծություններին: Ատենախոսության մեջ բացակայում են մանրակրկիտ իրականացված հաշվարկներ, հեղինակը գոյություն ունեցող բանաձևում փորձել է տեղադրել համապատասխան տվյալները և այն ներկայացրել է որպես նորույթ:

6. Ատենախոսը հաջորդ նորությամբ նշում է, որ հիմնավորվել է ՀՀ-ում պարտքի կառավարման գործակալության գործարկման անհրաժեշտությունը՝ որպես ներգրավված արտաքին փոխառու միջոցների շնորհիվ ապահովված տնտեսական աճի չափելիության գնահատման մեխանիզմ և առաջարկվել է ներգրավված միջոցների նկատմամբ հաշվետվողականության, թափանցիկության, հասցեականության և արդյունավետության ապահովման մոտեցում: Նախ նման գործակալության ստեղծման անհրաժեշտությունը դեռևս տարիներ առաջ ներկայացվել է տարբեր հետազոտողների կողմից, մյուս կողմից դժվար է առաջարկը համարել հիմնավորված 31-33 էջերում ներկայացված տեսական վերլուծության հիման վրա: Հիմնավորումը պահանջում է առավել խորը վերլուծություն, թե որակական, թե քանակական, թե մեթոդաբանական և գործիքակազմի առումներով: Ավելին՝ հեղինակը էջ 35-ում նշում է, որ ներկայումս ՀՀ Ֆինանսների նախարարությունը կիրառում է պետական պարտքի կառավարման լավագույն փորձը և գործիքակազմը:
7. Աշխատանքում հեղինակը երբեմն ներկայացնում է տեղեկատվություն, որի նպատակահարմարությունը չի սահմանում, օրինակ էջ 35-36 վերլուծվում են Վրաստանի և Ռուսաստանի պետական պարտքի կառավարման ուղղությունները: Այնուհետև պարզ չի դառնում, թե նշված վերլուծությունը ինչպես է օգտագործվել հետագայում: Կամ էջ 83-85-ում, պարագրաֆի վերջնամասում, անցում է կատարվում տարբեր հետազոտողների ստացված արդյունքների ուսումնասիրմանը: Միևնույն ժամանակ գլուխ 3-ի վերնագիրը, ըստ էության, կրկնում է ատենախոսության վերնագիրը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ դիտողությունների շտկումը կարող է օգտակար լինել աշխատանքի արդյունքները սահմանելիս: Անի Զոհրաբի Գրիգորյանի՝ «ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման բարելավման ուղիները» թեմայով ատենախոսությունը կարելի

է որակել որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ դրված և քննարկված են ՀՀ արտաքին պետական պարտքի արդյունավետ կառավարման բարելավման որոշ հիմնահարցեր:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում:

Ներկայացված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Այսպիսով, **Անի Ձոհրաբի Գրիգորյանի՝ «ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման բարելավման ուղիները»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը հիմնականում համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի», ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն, հաջող պաշտպանության դեպքում, արժանի է Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Հ. Գ. Մնացականյան

19.01.2024 թ.

Հ. Գ. Մնացականյանի ստորագրության

Իսկությունը հաստատում եմ

ՀՊՏՀ-ի գիտական քարտուղար՝



Հ. Դարբինյան